ՊԱՇՏՈՆ	«Գործառնական օր» համակարգի ադմինիստրատոր
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	Ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ	19/08/2025
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	19/09/2025
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անորոշ՝ երեք ամիս փորձաշրջանով

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է «Գործառնական օր» համակարգի ադմինիստրատոր, ստորև նշված պարտականությունները կատարելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Գործառնական օր համակարգի՝ օգտվողների բացում, իրավասությունների տրամադրում և փոփոխում, օրվա հաշվարկների կատարում(փակում / բացում), հին հաշվեկշռային օրվա փակում / բացում, բառարանների ներմուծում և խմբագրում, մոդուլների կարգավորումների իրականացում, ծրագրային փոփոխությունների թեստավորում:
- Help Desk համակարգի միջոցով ներկայացված՝ խնդիրների լուծում և ընթացիկ գործընթացների սպասարկում, վարկային/ավանդային կաղապարների բացում և խմբագրու, նոր պահանջների կատարում ՝ անհրաժեշտության դեպքում՝ պահանջը այլ պատասխանատու անձանց ուղղորդելով:
- Բանկ-Հաճախորդ համակարգի սպասարկում, տեխնիկական խնդիրների լուծում:
- Տերմինալ վճարումների համակարգով՝ կատարված վճարումների դիտարկում սխալ հարցումների պարզաբանում, լուծում (ըստ անհրաժեշտության տերմինալը սպասարկող կազմակերպության հետ համատեղ):
- Overdue՝ Խնդրահարույց վարկերի կառավարման համակարգի՝ օգտվողների բացում, իրավասությունների տրամադրում և փոփոխում, բառարանների խմբագրում:
- Հաշվետվական հենքում OLAP-ի վերագործարկում:
- Ըստ անհրաժեշտության անմիջապես տվյալների հենքից SQL հարցումների միջոցով տվյալների արտահանում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ
- LS Bank ծրագրի աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն
- Բանկային օրենսդրության իմացություն
- Համակարգչային գիտելիքներ
- Մայրենի լեզվի գերազանց, անգլերեն և ռուսերեն լեզուների լավ իմացություն
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություն, միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտ ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/83 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը :